«ԱՐՄԵՆԻԱ ԻՆՇՈՒՐԱՆՍ»
ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԱՓԱԿ
ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
«ԱՐՄԵՆԻԱ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՍՊԸ խորհրդի
« 14 » օգոստոսի 2025 թ. թիվ 47 որոշմամբ

ԱՐՏԱՍԱՀՄԱՆԻՑ ՀՀ ԺԱՄԱՆԱԾ ԱՆՁԱՆՑ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ

ք. Երևան

ԱՐՏԱՍԱՀՄԱՆԻՑ ՀՀ ԺԱՄԱՆԱԾ ԱՆՁԱՆՑ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԲԱԺԻՆ 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ	2
ԲԱԺԻՆ 2. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱ, ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿՆՔՄԱՆ ԿԱՐԳ	3
ԲԱԺԻՆ 3. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏ, ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔ	4
ԲԱԺԻՆ 4. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՊԱՏԱՀԱՐՆԵՐ, ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՌԻՍԿԵՐ	4
ԲԱԺԻՆ 5. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԳՈՒՄԱՐ, ԱՊԱՀՈՎԱԳՐԱՎՃԱՐ, ԱՊԱՀՈՎԱԳՐԱՎՃԱՐ ՉՎՃԱՐԵԼՈՒ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐ	6
ԲԱԺԻՆ 6. ՉՀԱՏՈՒՑՎՈՂ ԳՈՒՄԱՐ (ՖՐԱՆՇԻԶԱ)	7
ԲԱԺԻՆ 7. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏ, ԴՐԱ ՎԱՂԱԺԱՄԿԵՏ ԼՈՒԾՈՒՄ	8
ԲԱԺԻՆ 8. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՀԱՏՈՒՑՄԱՆ ՄԵՐԺՄԱՆ ՀԻՄՔԵՐ	9
ԲԱԺԻՆ 9. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՀԱՏՈՒՑՈՒՄՆ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԿԱՐԳ, ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՀԱՏՈՒՑՄԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՓԱՍՏԱԹՂԹԵՐ, ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՀԱՏՈՒՑՄԱՆ ՉԱՓԻ ՈՐՈՇՄԱՆ ԿԱՐԳ	13
ԲԱԺԻՆ 10. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ	16
ԲԱԺԻՆ 11. ՀԱՏՈՒՑՈՒՄՆԵՐ ԱՅԼ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԻ ՆԵՐՔՈ	17
ԲԱԺԻՆ 12. ՎՆԱՍԻ ՀԱՏՈՒՑՄԱՆ ՊԱՀԱՆՋԻ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԱՆՈՑՈՒՄ ԱՊԱՀՈՎԱԴՐԻՑ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՂԻՆ (ՍՈՒԲՐՈԳԱՑԻԱ)	18
ԲԱԺԻՆ 13. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ ՄԱԺՈՐ)	18
ԲԱԺԻՆ 14. ԱՆՁՆԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՄՇԱԿՈՒՄ	18
ԲԱԺԻՆ 15. ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ԿԱՐԳ	20

ԱՐՏԱՍԱՀՄԱՆԻՑ ՀՀ ԺԱՄԱՆԱԾ ԱՆՁԱՆՑ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ

ԲԱԺԻՆ 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1. Սույն «Արտասահմանից Հայաստանի Հանրապետություն ժամանած անձանց աջակցության ապահովագրության կանոնները» (**այսուհետ՝ Կանոններ**) մշակված են ՀՀ օրենսդրության, մասնավորապես՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի, «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» ՀՀ օրենքի և այլ իրավական ակտերի համաձայն:

1.2. Արտասահմանից ՀՀ ժամանած անձանց աջակցության ապահովագրությունը ներառվում է «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» ՀՀ օրենքի ոչ կյանքի Ապահովագրության տեսակի *«Աջակցության ապահովագրություն»* դասի մեջ:

1.3. Կանոնները հանդիսանում են արտասահմանից ՀՀ ժամանած անձանց աջակցության ապահովագրության պայմանագրի և/կամ վկայագրի **(այսուհետ՝ Պայմանագիր)** անբաժանելի մասը: Պայմանագիրը կարող է բովանդակել այլ պայմաններ, որոնք որոշվում են կողմերի փոխադարձ համաձայնությամբ, չպետք է հակասեն Կանոններին, ՀՀ օրենսդրությանը և այլ իրավական ակտերին:

1.4. Կանոններում նշված պայմանները կարող են փոփոխվել (բացառվել կամ լրացվել) կողմերի գրավոր համաձայնությամբ՝ Պայմանագրի կնքման ժամանակ կամ դրա գործողության ընթացքում, պայմանով, որ նման փոփոխությունները չեն հակասում գործող օրենսդրությանը և Կանոններին:

1.5. Կանոնների համաձայն «ԱՐՄԵՆԻԱ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ապահովագրական սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը **(այսուհետ՝ Ապահովագրող),** գործելով օրենքի, իրավական ակտերի և իր կանոնադրության համաձայն, ֆիզիկական և իրավաբանական անձանց (**այսուհետ՝ Ապահովադիր**) հետ կնքում է ՀՀ (**ապահովագրության տարածք**) արտասահմանից ՀՀ ժամանած անձանց բժշկական, բժշկատրանսպորտային և Կանոններով նախատեսված քաղաքացիների այլ ծախսերի ապահովագրության պայմանագրեր՝ տալով նրանց համապատասխան ապահովագրության վկայագիր կամ պայմանագիր:

1.6. Անձը, ում օգտին կնքված է Պայմանագիրը, հանդիսանում է Ապահովագրված անձ: Կանոնների համաձայն Ապահովագրված անձ կարող են հանդիսանալ միայն ֆիզիկական անձինք:

1.7. Այն դեպքում, երբ Պայմանագիրն Ապահովադրի կողմից կնքված է իր իսկ օգտին, ապա նրա վրա տարածվում են Ապահովագրված անձի համար Կանոններով նախատեսված բոլոր իրավունքներն ու պարտականությունները:

1.8. Եթե Պայմանագրով այլ բան նախատեսված չէ, Ապահովագրված անձ կարող են համարվել մինչև 65 տարեկան օտարերկրյա քաղաքացիները: Ապահովագրված անձը չի կարող հանդիսանալ ՀՀ, ԼՂՀ քաղաքացի կամ տարեկան երեք ամսից ավել ՀՀ տարածքում բնակվող անձ:

1.9. Կանոնների հիման վրա կնքված Պայմանագրով Ապահովագրողը պարտավորվում է Պայմանագրում նշված պատահարի (**ապահովագրական դեպքի**) տեղի ունենալու դեպքում, պայմանավորված վճարի (**ապահովագրավճարի**) դիմաց և Պայմանագրով սահմանված գումարի (**ապահովագրական գումարի**) սահմաններում հատուցել Ապահովագրված անձին՝ Կանոնների 9-րդ կետում նշված պատահարների հետևանքով Ապահովագրված անձին պատճառված վնասների առնչությամբ նրա կողմից կատարված բժշկական, բժշկատրանսպորտային և Պայմանագրով սահմանված մատուցված այլ ծառայությունների համար:

1.10. Այն դեպքում, երբ Ապահովագրված անձը ինքնուրույն է վճարել բժշկական, բժշկատրանսպորտային և այլ ծառայությունների համար, ապա Ապահովագրողը, Կանոնների պայմանների պահպանման դեպքում, կհատուցի Ապահովագրված անձի կատարած ծախսերը Ապահովադրի (նրա կողմից լիազորված անձի) կողմից գրավոր դիմումի և բնօրինակ փաստաթղթերի հիման վրա:

ԲԱԺԻՆ 2. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱ, ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿՆՔՄԱՆ ԿԱՐԳ

2.1. Ապահովագրողը պարտավորվում է Պայմանագրով սահմանված որոշակի գումարի (**ապահովագրավճարի**) դիմաց Կանոններով նախատեսված և Պայմանագրում նշված որոշակի ապահովագրական պատահարի տեղի ունենալու դեպքում Ապահովադրին վճարել Պայմանագրով սահմանված որոշակի գումարի (**ապահովագրական գումարի**) սահմաններում ապահովագրական հատուցում:

2.2. Պայմանագրի կնքման համար հիմք է հանդիսանում Ապահովադրի բանավոր հայտարարությունը կամ Ապահովագրողի պահանջով գրավոր դիմումը, եթե անհրաժեշտ է որպեսզի Ապահովադրի կողմից ներկայացվող դիմումի մեջ ներառվեն լրացուցիչ տեղեկություններ, որոնք չեն ներառվելու Պայմանագրում և/կամ այդ տեղեկություններն անհրաժեշտ են Ապահովագրողին ապահովագրության ընդունվող ռիսկի գնահատման նպատակով լրացուցիչ ուսումնասիրություններ իրականացնելու համար:

2.3. Պայմանագիրն Ապահովագրողի և Ապահովադրի (**այսուհետ՝ Կողմեր**) միջև կնքվող գրավոր համաձայնագիր է, ըստ որի Ապահովագրողը պարտավորվում է ապահովագրական պատահարի առաջացման դեպքում իրականացնել ապահովագրական հատուցում այն անձին, ում օգտին կնքվել է Պայմանագիրը, իսկ Ապահովադիրը պարտավորվում է Պայմանագրում սահմանված ժամկետներում վճարել ապահովագրավճար:

2.4. Պայմանագիրը կարող է կնքվել՝ ՀՀ տարածք մուտք գործելիս, ՀՀ տարածք մուտք գործելուց հետո, կամ նախքան ՀՀ տարածք մուտք գործելը.

2.4.1" Ապահովագրված անձի ՀՀ տարածք մուտք գործելու օրը Պայմանագիր կնքելու դեպքում վերջինս ուժի մեջ է մտնում Պայմանագրի կնքման օրվանից: Այս դեպքում ապահովագրության ժամկետի գործողության սկիզբը չի կարող լինել ավելի շուտ քան Պայմանագրի կնքման օրվան հաջորդող օրվա 00:00 ժամը:

2.4.2" Ապահովագրված անձի ՀՀ տարածք մուտք գործելու օրվան հաղորդող օրերին Պայմանագիր կնքելու դեպքում վերջինս ուժի մեջ է մտնում 48 ժամ հետո, ընդ որում ապահովագրական պատահարների դեպքում ծախսերը հատուցվում են 70 (յոթանասուն) տոկոսի չափով: Այս դեպքում ապահովագրության ժամկետի գործողության սկիզբը և ավարտը կարող են չհամընկնել Ապահովագրված անձի ՀՀ տարածքում գտնվելու ամբողջ ընթացքի հետ, այսինքն՝ ապահովագրությունը կարող է կատարվել ճանապարհորդության որոշակի ժամանակահատվածի համար: Պայմանագրի կնքման պահից 24 ժամ հետո գործակալի կամ Ապահովադրի կողմից Ապահովագրողին ներկայացված վկայագրերը համարվում են անվավեր:

2.4.3" Նախքան Ապահովագրված անձի ՀՀ տարածք մուտք գործելու օրը Պայմանագիր կնքելու դեպքում Ապահովադիրը նախքան ՀՀ մուտք գործելը Ապահովագրողին կամ նրա ներկայացուցչին հայտնում է 2.5 կետում նշված տվյալները, որից հետո Ապահովագրողը որոշում է կայացնում Պայմանագիր կնքելու մասին: Պայմանագիրը ուժի մեջ է մտնում Ապահովագրված անձի ՀՀ մուտք գործելու օրվանից: Պայմանագրի

կնքման փաստը հաստատվում է Ապահովադրի կողմից Ապահովագրողին կամ նրա ներկայացուցչին ապահովագրավճարի վճարումով:

2.5. Պայմանագիր կնքելու համար Ապահովադիրը Ապահովագրողին (նրա լիազոր ներկայացուցչին) պետք է հայտնի հետևյալ տվյալները՝

2.5.1. Ապահովադրի անունը, ազգանունը, հայրանունը,

2.5.2. ծննդյան ամսաթիվը, հասցեն և հեռախոսահամարը,

2.5.3. եթե Ապահովադիրն իրավաբանական անձ է, ապա պետք է տրամադրի անվանումը, իրավաբանական հասցեն, հեռախոսը և բանկային ռեկվիզիտները,

2.5.4. ճամփորդության մեջ գտնվելու ժամանակահատվածի սկիզբը և ավարտը,

2.5.5. Ապահովագրական գումարի չափը,

2.5.6. այլ փաստաթղթեր կամ դրանց պատճենները կամ տվյալներ, եթե այդպիսիք կպահանջի Ապահովագրողը:

2.6. Պայմանագրի կնքման ժամանակ Ապահովագրողն Ապահովադրից կարող է պահանջել, որպեսզի վերջինս ներկայացնի իրեն հայտնի բոլոր այն հանգամանքները, որոնք կարող են ռիսկի գնահատման համար նշանակալից ազդեցություն ունենալ, այդ թվում առկա քրոնիկ հիվանդությունները, ալերգիաները, մշտապես հսկողության տակ գտնվող հիվանդությունները և մշտապես ընդունվող դեղորայքի անվանումները:

2.7. Ապահովագրողն իրավունք ունի առանց որևէ բացատրության մերժել Պայմանագրի կնքումը:

ԲԱԺԻՆ 3. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏ, ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔ

3.1. Կանոններով ապահովագրության օբյեկտ են հանդիսանում Ապահովագրված անձի ՀՀ գործող օրենսդրությանը չհակասող գույքային շահերը՝ կապված նրան՝ ՀՀ տարածքում գտնվելու ընթացքում բժշկական, բժշկատրանսպորտային ծառայությունների, էվակուացիայի, հայրենադարձման և այլ ծառայությունների մատուցման հետ, ինչպես նաև Կանոններով նախատեսված ապահովագրական պատահար տեղի ունենալու դեպքում առաջացած ծախսերի հատուցման հետ:

3.2. Կանոնների համաձայն ապահովագրությունը գործում է ՀՀ տարածքում:

ԲԱԺԻՆ 4. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՊԱՏԱՀԱՐՆԵՐ, ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՌԻՍԿԵՐ

4.1. Ապահովագրական պատահար է հանդիսանում Պայմանագրով նախատեսված իրադարձությունը, որի արդյունքում առաջանում է Ապահովագրողի ապահովագրական հատուցում վճարելու պարտականությունը:

4.2. Կանոնների համաձայն ապահովագրական պատահար է համարվում Պայմանագրի գործողության ժամկետում իրականացված ուղևորության ընթացքում Ապահովագրողին կամ բժշկական և/կամ այլ ծառայություններ մատուցող անձանց և/կամ հաստատություններին դիմելը՝ Ապահովագրված անձի մոտ հանկարծակի հիվանդության առաջացման կամ դժբախտ պատահարի կապակցությամբ բժշկական և/կամ այլ ծառայություններ ստանալու համար,

4.3. Կանոնների հիման վրա կնքված Պայմանագրով Ապահովագրողը պարտավորվում է ապահովագրական պատահար տեղի ունենալու դեպքում կազմակերպել Ապահովագրված անձին բժշկական և/կամ այլ ծառայությունների մատուցման կազմակերպումը, ինչպես նաև

ապահովել նման ծառայությունների դիմաց վճարումը կամ Պայմանագրով սահմանված ապահովագրական գումարի սահմաններում ծախսերի հատուցումը: Նշված ծառայությունների մատուցման կազմակերպումն Ապահովագրողն իրականացնում է բժշկական և/կամ այլ ծառայությունների մատուցման իրավունք ունեցող անձանց և/կամ հաստատությունների հետ կնքված պայմանագրերի հիման վրա:

4.4. Հատուցման ենթակա են՝

4.4.1. Բժշկական ծախսերը, այդ թվում՝

4.4.1.1. շտապ և անհետաձգելի բուժօգնության հետ կապված ծախսերը,

4.4.1.2. ամբուլատոր բուժման, մասնավորապես՝ բժշկական ծառայություններից օգտվելու, ախտորոշիչ հետազոտությունների, բժշկի կողմից նշանակված դեղամիջոցների, վիրակապային և ֆիքսման այլ միջոցների (գիպս, բանդաժ) հետ կապված ծախսերը: Անհրաժեշտության դեպքում Ապահովագրողը կհատուցի նաև անգլախոս թարգմանչի կողմից թարգմանչական ծառայության տրամադրման հետ կապված ծախսերը, սակայն ոչ ավելի, քան 15 000 ՀՀ դրամի չափով՝ յուրաքանչյուր ապահովագրական պատահարի համար,

4.4.1.3. ստացիոնարում (ստանդարտ տիպի հիվանդասենյակում) կացության և բուժման, մասնավորապես՝ անհետաձգելի վիրահատությունների, ախտորոշիչ հետազոտությունների հետ կապված ծախսերը: Վաղաժամ ծննդաբերության դեպքում (մինչև հղիության 32-րդ շաբաթը ներառյալ) նորածնի բուժման համար անհրաժեշտ ծախսերը ենթակա են հատուցման, սակայն ոչ ավելի քան 100 000 ՀՀ դրամի չափով՝ յուրաքանչյուր ապահովագրական պատահարի համար,

4.4.1.4. փրկարարական աշխատանքների հետ կապված ծախսերը, սակայն ոչ ավելի, քան 200 000 ՀՀ դրամի չափով՝ յուրաքանչյուր ապահովագրական պատահարի համար, եթե այդպիսի միջոցառումները հարկավոր են կյանքը փրկելու համար և հիմնավորված են համապատասխան փաստաթղթերով:

4.4.2. Բժշկատրանսպորտային ծախսերը, որոնք կատարվել են հանկարծակի առաջացած հիվանդության կամ դժբախտ պատահարի հետևանքով, մասնավորապես՝

4.4.2.1. Ապահովագրական պատահարի առաջացման դեպքում առաջին բժշկական օգնության տրամադրման և այլ ստացիոնար բժշկական հաստատություն տեղափոխման համար կատարված ծախսեր: Ապահովագրված անձի առողջական վիճակի սրացման դեպքում, երբ Ապահովագրողի կողմից նշանակված բժիշկը տեղի բուժող բժշկի հետ խորհրդակցելուց հետո որոշում է, որ իր մասնագիտական կարծիքով հիվանդին պետք է անհապաղ տեղափոխել այլ հիվանդանոց՝ բուժելու նպատակով, Ապահովագրողը կազմակերպում է տեղափոխումը այն բուժհաստատություն (ստացիոնար), որտեղ հնարավոր է պատշաճ բժշկական հսկողության ներքո տրամադրել համապատասխան բուժում:

4.4.2.2. անհրաժեշտ բժշկական ուղեկցմամբ Ապահովագրված անձի բժշկական հայրենադարձման համար մինչև վերջինիս բնակության վայրին ամենամոտը գտնվող տրանսպորտային հանգույցին (օդանավակայանին, երկաթուղային կայարանին) ամենամոտը գտնվող հիվանդանոց, եթե նրա վիճակը թույլ է տալիս նման էվակուացիա:

4.4.3. Հետմահու հայրենադարձման հետ կապված ծախսերը, որոնք հաստատված են (գրավոր համաձայնեցված են) Ապահովագրողի (նրա ներկայացուցիչների) կողմից, Ապահովագրված անձի մինչև իր մշտական բնակության վայր հասցնելու հետ կապված ծախսերը կամ հուղարկավորման ծախսերը ՀՀ-ում, սակայն ոչ ավելի, քան 1 000 000 ՀՀ դրամի չափով, եթե Ապահովագրված անձը մահացել է հանկարծակի հիվանդության առաջացման կամ դժբախտ պատահարի հետևանքով:

4.4.4. Անհետաձգելի ատամնաբուժական օգնության ծախսերը՝ կապված սուր ատամնացավի դադարեցման, թեթևացման, այդ թվում՝ ատամների հասարակ և ժամանակավոր լցավորման, պրոթեզների ֆունկցիոնալությունը վերականգնելու համար դրանց վերանորոգման և ժամանակավոր միջոցների ձեռնարկման հետ, սակայն ոչ ավելի, քան 40 000 ՀՀ դրամի չափով՝ յուրաքանչյուր ապահովագրական պատահարի համար:

4.4.5. Հանկարծակի հիվանդության, դժբախտ պատահարի դեպքում Ապահովագրված անձի լրացուցիչ ծախսերը, մասնավորապես՝

4.4.5.1. Երրորդ անձանց համար տրամադրված տրանսպորտային ծառայության հատուցման վճարման հետ կապված ծախսերը: Բժշկական անհրաժեշտության դեպքում, եթե միայնակ ճանապարհորդող Ապահովագրված անձը սույն Կանոններում և Պայմանագրում նշված ապահովագրության տարածքում հոսպիտալացվում է 10 (տաս) օրից ավելի ժամանակահատվածով, Ապահովագրողը կարող է տրամադրել էկոնոմ կարգի միակողմանի ուղևորատոմս Ապահովագրված անձի կողմից մատնանշված անձին՝ հիվանդին այցելելու համար: Այդ անձի ապրելակերպի համար ծախսերը ապահովագրության տարածքում Ապահովագրողի կողմից չեն ծածկվում:

4.4.5.2. Ապահովագրված անձի խնամքի տակ գտնվող անձանց վերադարձի ծախսերը: Եթե Ապահովագրված անձի հիվանդության կամ դժբախտ դեպքի հետևանքով վերջինիս խնամքի տակ գտնվող երեխաները գտնվում են Կանոններում և Պայմանագրում նշված ապահովագրության տարածքում առանց խնամքի, ապա Ապահովագրողը հատուցում է մշտական բնակության վայր իրենց վերադարձի ծախսերը էկոնոմ դասով: Համապատասխան պատրաստություն իրականացնելու համար այս դեպքում անհրաժեշտ է կապի մեջ մտնել Ապահովագրողի հետ: Եթե անհրաժեշտ են ուղեկցողներ, իսկ ավիաընկերությունը չի տրամադրում դրանք, ապա ուղեկցողներին տրամադրում է Ապահովագրողը՝ հատուցելով միայն վերջիններիս էկոնոմ կարգի երկկողմ ուղևորատոմսի ծախսերը:

ԲԱԺԻՆ 5. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԳՈՒՄԱՐ, ԱՊԱՀՈՎԱԳՐԱՎՃԱՐ, ԱՊԱՀՈՎԱԳՐԱՎՃԱՐ ՉՎՃԱՐԵԼՈՒ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐ

5.1. Ապահովագրական գումարը Պայմանագրով սահմանված դրամական գումարն է, որի սահմաններում Ապահովագրողն իրականացնում է հատուցում:

5.2. Ապահովագրական գումարի չափը սահմանվում է Կանոնների համաձայն կնքված Պայմանագրում/Վկայագրում:

5.3. Ապահովագրական հատուցում իրականացնելուց հետո ապահովագրական գումարը ինքնաշխատ կերպով նվազում է հատուցված գումարի չափով: Ապահովագրական գումարը համարվում է նվազեցված ապահովագրական հատուցում վճարելու մասին Ապահովագրողի որոշումը համապատասխան ստորագրությամբ Ապահովադրին առձեռն հանձնելու կամ փոստով ուղարկելու պահից: Ապահովագրական հատուցման գումարը ստանալուց հետո Ապահովադիրն իրավունք ունի լրացուցիչ ապահովագրավճարի դիմաց վերականգնել նախնական ապահովագրական գումարի չափը: Նախնական ապահովագրական գումարի չափը չվերականգնելու դեպքում Պայմանագրի գործողության ընթացքում հաջորդ հատուցման ժամանակ հիմք է ընդունվում նվազեցված ապահովագրական գումարը:

5.4. Ապահովագրավճար է համարվում ապահովագրության համար նախատեսված վճարը, որն Ապահովադիրը պարտավոր է մուծել Ապահովագրողին կամ նրա կողմից

լիազորված անձին Պայմանագրի կնքման ժամանակ, բայց ոչ ուշ քան Պայմանագրի գործողության ժամկետի սկիզբը, եթե Պայմանագրով այլ բան նախատեսված չէ:

5.5. Ապահովագրավճարի մեծությունը հաշվարկվում է Ապահովագրողի կողմից սահմանված ապահովագրական սակագնի հիման վրա: Ապահովագրական սակագինը որոշվում է Ապահովագրողի կողմից՝ ելնելով ապահովագրական գումարի չափից, ապահովագրության ժամկետներից, ապահովագրական ռիսկերի Ապահովադրի կողմից ընտրված ծածկույթից, կարգավորիչ գործակիցներից, չհատուցվող գումարի մեծությունից և Ապահովագրության ընդունվող ռիսկի վրա ազդեցություն ունեցող այլ հանգամանքներից:

5.6. Ապահովագրավճարն Ապահովադրի կողմից վճարվում է միանվագ և ամբողջությամբ՝ ապահովագրության ամբողջ ժամկետի համար: Վճարման կարգը սահմանվում է Պայմանագրով:

5.7. Ապահովագրավճարներն Ապահովադրի կողմից կարող են վճարվել կանխիկ կերպով՝ Ապահովագրողի դրամարկղ կամ նրա լիազորված ներկայացուցչին (այդ թվում՝ ապահովագրական գործակալին), իսկ անկանխիկ հաշվարկների դեպքում՝ Ապահովագրողի կամ նրա ներկայացուցչի համապատասխան հաշվարկային հաշվին:

5.8. Ապահովագրավճարի վճարման ամսաթիվ է համարվում՝

5.8.1. կանխիկ հաշվարկների դեպքում՝ Ապահովագրողի լիազոր ներկայացուցչին կամ Ապահովագրողի դրամարկղ գումարի մուծման օրը,

5.8.2. անկանխիկ հաշվարկների դեպքում՝ Ապահովագրողի լիազոր ներկայացուցչի կամ Ապահովագրողի հաշվարկային հաշվին գումարի փոխանցման օրը:

5.9. ՀՀ դրամին համարժեք արտարժույթով ապահովագրության դեպքում ապահովագրավճարը վճարվում է ՀՀ դրամով՝ Պայմանագիրը կնքելու օրվա դրությամբ ՀՀ կենտրոնական բանկի կողմից հրապարակված փոխարժեքով, եթե Պայմանագրով այլ բան նախատեսված չէ:

5.10. Ապահովագրավճարը վճարվում է Պայմանագրի կնքման օրը: Ապահովագրավճարի վճարման փաստը հաստատում է, որ Ապահովադիրը/Ապահովագրված անձը ծանոթացել է և համաձայն է ապահովագրության պայմաններին:

ԲԱԺԻՆ 6. ՉՀԱՏՈՒՑՎՈՂ ԳՈՒՄԱՐ (ՖՐԱՆՇԻԶԱ)

6.1. Պայմանագրում Կողմերը կարող են սահմանել Ապահովադրի մասնակցության չափը վնասի հատուցմանը՝ չհատուցվող գումար (ֆրանշիզա):

6.2. Չհատուցվող գումարը կարող է լինել պայմանական կամ ոչ պայմանական և սահմանվում է ապահովագրական գումարի նկատմամբ տոկոսային արտահայտությամբ կամ կարող է սահմանվել բացարձակ դրամական արտահայտությամբ:

6.3. Պայմանական չհատուցվող գումարի ժամանակ Ապահովագրողը չի վճարում ապահովագրական հատուցում, եթե վնասը չի գերազանցում չհատուցվող գումարի չափը, իսկ եթե վնասը գերազանցում է չհատուցվող գումարի չափը, ապա ապահովագրական հատուցումը վճարվում է վնասի ամբողջ ծավալով կամ չհատուցվող գումարը հավասարվում է 0-ի:

6.4. Ոչ պայմանական չհատուցվող գումարի ժամանակ ապահովագրական հատուցումը նվազեցվում է չհատուցվող գումարի չափով:

6.5. Այն դեպքերում, երբ ապահովագրական հատուցումն ուղղակիորեն իրականացվում է այն անձանց և հաստատություններին, որոնք մատուցել են ծառայություններ և իրականացրել ծախսեր, մատուցված ծառայությունների արժեքի մի մասը, որը հավասար է

Պայմանագրում սահմանված ոչ պայմանական չհատուցվող գումարի չափին, վճարվում է Ապահովադրի (Ապահովագրված անձի) կողմից ծառայությունների ստացման ժամանակ:

ԲԱԺԻՆ 7. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏ, ԴՐԱ ՎԱՂԱԺԱՄԿԵՏ ԼՈՒԾՈՒՄ

7.1. Պայմանագրի գործողության ժամկետի սկիզբը և ավարտը նշվում են Պայմանագրում: Պայմանագրի գործողության ժամկետի սկիզբը չի կարող լինել Պայմանագրի կնքման ժամկետից շուտ, հաշվի առնելով նաև 2.4.1 ենթակետով սահմանված դեպքը: Պայմանագիրը կնքվում է առավելագույնը 1 տարի ժամկետով և նախատեսված է Պայմանագրի գործողության մեջ գտնվելու ընթացքում ՀՀ տարածք մեկ կամ մի քանի ուղևորությունների համար:

7.2. Ապահովագրությունը գործում է միայն ուղևորության ընթացքում:

7.3. Բոլոր ուղևորությունների ժամկետը միասին վերցրած չի կարող գերազանցել տարեկան 90 օրը:

7.4. Պայմանագրի կնքման համար Ապահովագրողին պետք է ներկայացվի Ապահովագրված անձի անձնագիրը:

7.5. Եթե ապահովագրության գործողության ժամկետը լրացել է, իսկ Ապահովագրված անձի բուժումն ապահովագրական պատահար ճանաչված հիվանդության կամ դժբախտ պատահարի գծով չի ավարտվել, Ապահովագրողն իր վրա է վերցնում բժշկական ծառայությունների գծով ծախսերի հատուցումը միայն մինչև այն պահը, երբ վերանում է Ապահովագրված անձի կյանքին վտանգի սպառնումը և նրան հնարավոր է տեղափոխել իր մշտական բնակության վայր, սակայն ոչ ավել քան ապահովագրության գործողության ժամկետի ավարտից հետո 10 (տաս) օր:

7.6. Ցանկացած դեպքում ապահովագրության գործողության սկզբի ամսաթիվը չի կարող սահմանվել ավելի շուտ, քան Ապահովագրված անձի ՀՀ տարածք ժամանելու ամսաթիվը:

7.7. Ցանկացած դեպքում ապահովագրության գործողությունը չի կարող ավարտվել ավելի ուշ, քան Ապահովագրված անձի ՀՀ-ի տարածքը լքելը կամ ՀՀ-ում վիզայի ռեժիմը խախտելը կամ ՀՀ-ում մշտապես բնակվելու որոշում կայացնելը:

7.8. Պայմանագրի գործողության ժամկետը հաշվարկվում է Երևանյան ժամանակով և սկսվում է ոչ շուտ, քան Պայմանագրում, որպես ապահովագրության ժամկետի սկիզբ նշված ամսաթվի 00:00 ժամը, և ավարտվում ոչ ուշ, քան Պայմանագրում որպես ապահովագրության ժամկետի ավարտ նշված ամսաթվի 23:59 ժամը:

7.9. Պայմանագիրը չի գործում այն պետության տարածքում, որի քաղաքացի է հանդիսանում Ապահովագրված անձը կամ ունի կացության իրավունք:

7.10. Պայմանագրի գործողությունը դադարում է՝

7.10.1. Պայմանագրում նշված ժամկետի լրանալուց հետո,

7.10.2. Ապահովագրողի կողմից Կանոնների և դրանց հիման վրա կնքված Պայմանագրով ստանձնած իր պարտավորությունները ամբողջ ծավալով կատարելուց հետո,

7.10.3. Կողմերի համաձայնությամբ,

7.10.4. Ապահովադրի/Ապահովագրված անձի ՀՀ տարածքից դուրս գալու պահից, անձնագրում համապատասխան ծառայությունների կողմից՝ պետության սահմանը հատելու նշումի համաձայն, սակայն ոչ ուշ քան Պայմանագրում նշված ամսաթվի ժամը 23:59-ը,

7.10.5. օրենքով, այլ իրավական ակտերով, Կանոններով և Պայմանագրով նախատեսված այլ դեպքերում:

7.11. Ապահովադիրն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու Պայմանագիրը՝ այդ մասին ոչ պակաս քան 15 օր առաջ ծանուցելով Ապահովագրողին:

7.12. Ապահովադրի պահանջով Պայմանագրի վաղաժամկետ լուծման դեպքում Ապահովագրողն Ապահովադրին է վերադարձնում ապահովագրավճարներն՝ Պայմանագրի չլրացած ժամկետին համամասնորեն, ինչպես նաև Ապահովադրից գանձվում է տուգանք Պայմանագրի չգործած օրերի համար՝ հաշվարկված Պայմանագրով սահմանված ապահովագրավճարի 15%-ի չափով՝ հետևյալ բանաձևով՝

$$\frac{\text{Պայմանագրով սահմանված ապահովագրավճար} \times 15\%}{\text{Պայմանագրի գործողության օրեր}} \times \text{Պայմանագրի չլրացած օրեր}$$

եթե Պայմանագրով այլ բան նախատեսված չէ: Եթե Ապահովադրի պահանջները պայմանավորված են Ապահովագրողի կողմից ապահովագրության պայմանների և Կանոնների խախտմամբ, ապա Ապահովագրողն Ապահովադրին է վերադարձնում ապահովագրավճարներն՝ Պայմանագրի չլրացած ժամկետին համամասնորեն:

7.13. Ապահովագրողի պահանջով Պայմանագրի վաղաժամկետ լուծման դեպքում Ապահովադրին են վերադարձվում ապահովագրավճարներն՝ Պայմանագրի չլրացած ժամկետին համամասնորեն, իսկ եթե Ապահովագրողի պահանջները պայմանավորված են Ապահովադրի կողմից Պայմանագրի և Կանոնների խախտմամբ, ապա վերջինս Ապահովադրին է վերադարձնում ապահովագրավճարներն՝ Պայմանագրի չլրացած ժամկետին համամասնորեն, ինչպես նաև Ապահովադրից գանձվում է տուգանք Պայմանագրի չգործած օրերի համար՝ հաշվարկված Պայմանագրով սահմանված ապահովագրավճարի 15%-ի չափով՝ հետևյալ բանաձևով՝

$$\frac{\text{Պայմանագրով սահմանված ապահովագրավճար} \times 15\%}{\text{Պայմանագրի գործողության օրեր}} \times \text{Պայմանագրի չլրացած օրեր}$$

7.14. Պայմանագրի վաղաժամկետ լուծման դեպքում Ապահովադրին չեն վերադարձվում ապահովագրավճարները, եթե Ապահովադիրը տվյալ Պայմանագրի գծով դիմել է ապահովագրական հատուցում ստանալու համար անկախ ապահովագրական դեպքի հատուցման ենթակա լինելու կամ չլինելու փաստից:

ԲԱԺԻՆ 8. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՀԱՏՈՒՑՄԱՆ ՄԵՐԺՄԱՆ ՀԻՄՔԵՐ

8.1. Ապահովագրողն ազատվում է այն վնասների հատուցման պարտականությունից, որոնք ծագել են Ապահովադրի (Ապահովագրված անձի) կողմից հնարավոր վնասները նվազեցնելու ուղղությամբ ողջամիտ և նրան մատչելի միջոցներ կանխամտածված կերպով չձեռնարկելու հետևանքով:

8.2. Ապահովագրական հատուցման մերժման որոշման մասին Ապահովադիրը (Ապահովագրված անձը) տեղեկացվում է գրավոր՝ մերժման պատճառների հիմնավորմամբ, Ապահովագրողի կողմից պահանջված փաստաթղթերից վերջինն ստանալուց հետո՝ 5 (հինգ) օրվա ընթացքում:

8.3. Ապահովագրողը մերժում է ապահովագրական հատուցման իրականացումը հետևյալ դեպքերում՝

8.3.1. Ապահովագրված անձի ինքնասպանության (ինքնասպանության փորձի) դեպքում՝ բացառությամբ այն դեպքերի, երբ նա հասցվել էր նման վիճակի երրորդ անձանց հակաիրավական գործողությունների արդյունքում,

8.3.2. Ապահովագրված անձի կողմից իրեն միտումնավոր մարմնական վնասվածք հասցնելու դեպքում,

8.3.3. Ապահովագրված անձի ալկոհոլով (ալկոհոլ պարունակող նյութերով), ինչպես նաև թմրանյութերով կամ տոքսիկ թունավորման դեպքում, ալկոհոլային կամ թմրանյութային ինտոքսիկացիայի հետևանքների բուժման դեպքում, եթե իրավասու մարմինների կողմից չի արձանագրվել դրանց բռնի ուժով ներարկում, սխալմամբ կամ ստիպված օգտագործում և դրա հետևանքով դժբախտ պատահարի առաջացում,

8.3.4. վեներական հիվանդությունների, ՁԻԱՀ, ՄԻԱՎ վարակման՝ անկախ հիվանդության աղբյուրից, բնույթից և դրանից բխող այլ բարդություններից,

8.3.5. ինքն իրեն դիտավորյալ վտանգի ենթարկման (բացառությամբ՝ մարդկային կյանքը փրկելու փորձի դեպքերի) դեպքում,

8.3.6. հղիության կամ ծննդաբերության դեպքում (հղիության բարդացումների վերացման, հղիության ընդհատման, ծննդի վարման և դրա բարդացման, հղիության հետևանքով քրոնիկ հիվանդությունների սրացման բուժման, Ապահովագրված անձի խորհրդատվական-ախտորոշիչ զննման անցկացման, եթե խոսքը մոր և/կամ երեխայի կյանքը փրկելու կամ վաղաժամ ծնված երեխային բուժելու մասին չէ),

8.3.7. Ապահովագրված անձի կողմից սպորտի որևէ տեսակով զբաղվելու դեպքում,

8.3.8. Ապահովագրված անձի կողմից օրգանների նվիրատվության (դոնորության) և դրանից բխող հետևանքների դեպքում,

8.3.9. եթե Ապահովագրված անձի նպատակային բուժման (պլանային բուժօգնություն ստանալու) կամ այն դեպքերում, երբ Ապահովագրված անձի մոտ մինչև ուղևորության սկիզբը կամ Պայմանագիր ձեռք բերելու պահին առկա էին հիվանդություններ, որոնք պահանջում էին որևէ բժշկական օգնություն, դինամիկ և մշտական հսկողություն,

8.3.10. եթե ապահովագրության գործողության ժամկետի սկզբի դրությամբ Ապահովագրված անձի մոտ առկա էին տվյալ հիվանդությունները և գանգատները, ինչպես նաև այն դեպքում, երբ մինչև ապահովագրության գործողության ժամկետի սկզբին նախորդող 6 (վեց) ամսվա ընթացքում Ապահովագրված անձը տվյալ հիվանդությունների կամ դժբախտ պատահարների գծով համապատասխան բուժօգնություն է ստացել,

8.3.11. ռազմական գործողությունների, ինչպես նաև զորաշարժերի և այլ ռազմական միջոցառումների դեպքում,

8.3.12. քաղաքացիական պատերազմի, ցանկացած տիպի ժողովրդական հուզումների կամ գործադուլների դեպքում,

8.3.13. ահաբեկչական գործողությունների դեպքում,

8.3.14. Ապահովագրված անձի կամ այլ անձանց էվակուացիայի դեպքում, որը կազմակերպված չէ Ապահովագրողի կողմից և/կամ համաձայնեցված չէ Ապահովագրողի հետ,

8.3.15. Ապահովագրված անձի հակահիրավական գործողությունների հետևանքով հանկարծակի հիվանդության կամ դժբախտ պատահարի դեպքում,

8.3.16. Ապահովագրված անձի բժշկական օգնություն պահանջող հիվանդությունը կամ վնասվածքը, որը արդյունք է կամ կապված է քրոնիկ հիվանդությունների կամ մինչև Պայմանագրի կնքման պահը առկա և/կամ ախտորոշված հիվանդությունների հետ, բացառությամբ այն դեպքերի, երբ բժշկական ծառայությունները կապված են Ապահովագրված անձի կյանքը փրկելու հետ, ընդ որում ոչ ավել քան 200 000 ՀՀ դրամ չափով յուրաքանչյուր պատահարի գծով:

8.3.17. Ապահովագրված անձի բժշկական օգնություն պահանջող հիվանդությունը կամ վնասվածքը, եթե արտասահմանյան ուղևորությունը հակացուցված էր Ապահովագրված անձին՝ ելնելով նրա առողջական վիճակից,

8.3.18. հատուցման ենթակա չեն հետևյալ հիվանդությունների, իրավիճակների, դրանց բարդությունների և հետևանքների բուժմա հետ կապված ծախսերը.

8.3.18.1. հոգեկան հիվանդություններ և սահմանային վիճակներ,

8.3.18.2. ուռուցքային հիվանդություններ, արյան չարորակ հիվանդություններ, կենտրոնական նյարդային համակարգի ուռուցքներ,

8.3.18.3. վտանգավոր վարակներ (այդ թվում՝ ծաղիկ, ժանտախտ, խոլերա, բծավոր տիֆ և այլն),

8.3.18.4. թոքախտ, բոր, հեպատիտ, բացիլակրություն, պարազիտակրություն, վիրուսակրություն,

8.3.18.5. մասնագիտական հիվանդություններ, ճառագայթային հիվանդություն,

8.3.18.6. շաքարախտ (I և II տիպի),

8.3.18.7. արևային այրվածքներ և մաշկի այլ փոփոխություններ, որոնք առաջացել են ուլտրամանուշակագույն և այլ ճառագայթումների արդյունքում,

8.3.18.8. երիկամային քրոնիկ կամ լյարդային անբավարարություն,

8.3.18.9. բնածին անոմալիաներ և զարգացման արատներ կամ անատոմիական առանձնահատկություններ, ժառանգական կամ գենետիկ հիվանդություններ՝ պարբերական հիվանդություն, էպիլեպսիա, դեֆորմացիաներ և քրոմոսոմային խանգարումներ, մանկական ուղեղային պարալիչ,

8.3.18.10. ողնաշարի միջողնային սկավառակների ախտահարումներ, դեգեներատիվ դիստրոֆիկ փոփոխություններ, օստեոխոնդրոզ,

8.3.18.11. աուտոիմուն և շարակցական հյուսվածքի համակարգային հիվանդություններ,

8.3.18.12. աչքի լազերային վիրահատություններ,

8.3.18.13. միջուկային պայթյունի ուղղակի կամ անուղղակի ազդեցության, ռադիացիայի կամ ռադիոակտիվ վարակման, երկրաշարժի, հրաբխի ժայթքման կամ կրակի ազդեցության, սողանքի, սարերի փլվածքի, փոթորկի, պտտահողմի, մրրիկի, ջրհեղեղի, կարկուտի, հեղեղի կամ այլ տարերային աղետների հետևանքով:

8.3.19. Ապահովագրված անձի՝ Պայմանագրով և Կանոններով նախատեսված բժշկական և/կամ այլ ծառայություններ ստանալու համար դիմելու դեպքում, կապված՝

8.3.19.1. վերականգնողական բուժման, ոչ ավանդական ախտորոշման մեթոդների, բժշկության ոչ ավանդական մեթոդներով բուժման, ֆիզիոթերապիայի անցկացման, ՍՊԱ (SPA) պրոցեդուրաների հետ.

8.3.19.2. կոսմետիկ և պլաստիկ վիրահատությունների անցկացման, վերականգնողական վիրաբուժության, տարբեր տիպի պրոթեզավորման (այդ թվում՝ ատամնային և ականային), պրոթեզների, էնդոպրոթեզների, բժշկական սարքավորումների, իմպլանտների, տեսողական և լսողական սարքերի, կարգավորիչ բժշկական հարմարանքների ձեռքբերման ծախսերի (բացառությամբ դժբախտ պատահարի արդյունքում ի հայտ եկած դեպքերի՝ ոչ ավել քան 400 000 ՀՀ դրամ մետաղական կոնստրուկցիաների համար), քաշի և խոսքի շտկման, սեռի վիրաբուժական փոփոխման, քթի միջնապատի դեֆորմացիաների և դրանց բարդությունների հետ, բացառությամբ դժբախտ պատահարի դեպքերի.

8.3.19.3. պրոֆիլակտիկ բուժում ստանալու, կանխարգելիչ պատվաստման, ախտահանության, սանատոր-առողջարանային, բժշկական փորձաքննության հետ՝ բացառությամբ համաճարակների և այլ արտակարգ դեպքերի, որոնք պահանջում են նմանատիպ միջոցառումների անցկացում.

8.3.19.4. ներարգանդային սեղմնավորման, էքստրակորպորալ բեղմնավորման, ռեպրոդուկտիվ ֆունկցիայի հետ կապված ցանկացած բժշկական օգնություն.

8.3.19.5. կենսաակտիվ հավելումներ, վիտամինաթերապիա, կոսմետիկ պարագաներ.

8.3.19.6. կորոնարոգրաֆիայի և սրտային վիրաբուժության հետ, եթե այլ բան նախատեսված չէ Պայմանագրով:

8.3.20. եթե ապահովագրական պատահարի հետ կապված ծախսերը փաստացի հաստատված չեն եղել՝ Ապահովագրված անձի կողմից Ապահովագրողին սույն պայմանների համաձայն պահանջվող փաստաթղթերը չներկայացնելու պատճառով:

8.3.21. ատամնաբուժական օգնության մատուցման դեպքում, բացառությամբ սույն պայմաններում սահմանված դեպքերի.

8.3.22. էվակուացիայի դեպքում, եթե հիվանդությունը կամ վնասվածքը ենթակա են բուժման և չեն խոչընդոտում Ապահովագրված անձի ուղևորությունը շարունակելուն.

8.3.23. ինքնաբուժման կամ չլիցենզավորված բժշկական հաստատություններում մատուցված ծառայությունները.

8.3.24. լրացուցիչ հարմարությունների ստացման դեպքում, մասնավորապես՝ հարմարավետ հիվանդասենյակ, հիվանդասենյակում հեռուստացույցի, հեռախոսի, օդորակչի, խոնավացուցչի առկայություն, վարսահարդարի, մերսողի, դիմահարդարի, ոճաբանի և այլ լրացուցիչ ոչ առաջին անհրաժեշտության պայմաններ.

8.3.25. ապահովագրական պատահարի հետ կապված բժշկին դիմելու և նրանից ստացված ցուցումների կատարումից Ապահովագրված անձի կամավոր հրաժարվելու դեպքում,

8.3.26. ՀՀ-ում ցանկացած վարձու աշխատանք կատարելու ժամանակ ի հայտ եկած հիվանդությունները և վնասվածքներ, եթե Պայմանագրով այլ բան նախատեսված չէ,

8.3.27. բուժօգնության միջոցների գնման և նորոգման հետ կապված ծախսերի դեպքում, բացառությամբ բժշկի կողմից նշանակված դեղամիջոցների, վիրակապային և ֆիքսման միջոցների (գիպս, բանդաժ),

8.3.28. Պայմանագրի գործողության ժամկետի ավարտից, ինչպես նաև Ապահովագրված անձի՝ նրա մշտական բնակության վայր վերադառնալուց հետո առաջացած ծախսերի դեպքում,

8.3.29. եթե ծախսերն ուղղակիորեն կամ անուղղակիորեն ծագել են ցանկացած կառավարության, պետական կամ տեղական իշխանությունների հրահանգով Ապահովագրված անձի գույքի բռնագրավման, բռնագանձման, ոչնչացման, վնասման հետևանքով,

8.3.30. ապահովագրական պատահար տեղի ունենալուց 30 (երեսուն) օր հետո կատարված և/կամ կատարման ենթակա ծախսերի դեպքում,

8.3.31. պրոֆիլակտիկ և կանխարգելիչ հետազոտությունների համար կատարված ծախսերի դեպքում և այն հետազոտությունների դեպքում, որոնց չի հետևում որևէ բուժում,

8.3.32. առանց բժշկական ցուցումների իրականացվող բժշկական ծառայությունները, դեղորայքը, հոսպիտալացումը,

8.3.33. Ապահովագրողի (նրա ներկայացուցիչների) հետ Ապահովագրված անձի կողմից իր ծախսերը չհամաձայնեցնելու դեպքում՝ բացառությամբ սույն պայմաններով նախատեսված դեպքերի,

8.3.34. բարդ խորացված մեթոդներով հետազոտությունները (մագնիսառեզոնանսային տոմոգրաֆիա, համակարգչային տոմոգրաֆիա և այլն) անց են կացվում միայն համաձայն բժշկական ցուցումների և Ապահովագրողի հետ նախապես համաձայնեցնելու դեպքում,

8.3.35. Ապահովադիրը (Ապահովագրված անձը) պատահարի մասին չի հայտնել Ապահովագրողին 24 ժամվա ընթացքում, բացառությամբ այն դեպքերի, երբ պատահարի մասին հայտնելն անհնար է եղել: Վերջին դեպքում Ապահովադիրը (Ապահովագրված անձը) պետք է դա իրականացնի առաջին իսկ հնարավորության դեպքում և գրավոր և փաստաթղթային հիմնավորի ուշացման պատճառները,

8.3.36. Ապահովադիրը (Ապահովագրված անձը) պատահարի մասին չի հայտնել համապատասխան իրավասու մարմիններին (բժշկական հաստատությանը, ոստիկանության և այլն),

8.3.37. Ապահովադիրը (Ապահովագրված անձը) ներկայացրել է կեղծ տեղեկություններ և կեղծ փաստաթղթեր և օգտագործել է ցանկացած կեղծ միջոցներ ապահովագրական հատուցում ստանալու համար:

8.4. Կանոնների համաձայն կնքված Պայմանագրով չի հատուցվում բարոյական վնասը:

ԲԱԺԻՆ 9. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՀԱՏՈՒՑՈՒՄՆ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԿԱՐԳ, ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՀԱՏՈՒՑՄԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՓԱՍՏԱԹՂԹԵՐ, ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՀԱՏՈՒՑՄԱՆ ՉԱՓԻ ՈՐՈՇՄԱՆ ԿԱՐԳ

9.1. Ապահովագրական հատուցումն ապահովագրական պատահարի տեղի ունենալու արդյունքում Ապահովագրողի կողմից Պայմանագրի հիման վրա Ապահովադրին, Ապահովագրված անձին կամ Շահառուին վճարման ենթակա դրամական արտահայտությամբ գումարն է, որը վճարվում է ՀՀ դրամով: Ապահովագրական ծածկույթում ներառված ծառայությունների և ծախսերի վճարումն իրականացվում է ուղղակիորեն այդ ծառայությունները մատուցող կազմակերպություններին՝ նրանց և Ապահովագրողի միջև առկա համապատասխան պայմանագրերի հիման վրա (մասնավորապես՝ բժշկական, բժշկատրանսպորտային և այլ ծառայությունների կազմակերպման և ֆինանսավորման մասին) կամ Ապահովադրին, Ապահովագրված անձին, Երրորդ անձանց, Շահառուներին:

9.2. Ապահովագրական հատուցումը կարող է տրամադրվել Ապահովադրին (Ապահովագրված անձին) այն դեպքում, եթե նա, Ապահովագրողի (նրա ներկայացուցիչների) հետ համաձայնեցնելով, Կանոնների 9.7 կետով նախատեսված կարգով ինքնուրույն վճարել է իրեն մատուցված ծառայությունների դիմաց և Ապահովագրողին ներկայացրել է հաշիվներ և վճարման փաստը հաստատող այլ վճարային փաստաթղթեր:

9.3. Ապահովագրական հատկանիշներ ունեցող պատահար տեղի ունենալու դեպքում Պայմանագրով նախատեսված բժշկական և այլ ծառայություններ ստանալու համար Ապահովագրված անձն անհապաղ պետք է Պայմանագրում նշված հեռախոսահամարներով դիմի Ապահովագրողին և տեղի ունեցած պատահարի մասին տեղեկացնի Ապահովագրողին՝ հայտնելով Պայմանագրի տվյալները:

9.4. Ապահովագրական պատահարի հատկանիշներ ունեցող դեպքի տեղի ունենալու մասին տեղեկանալուց հետո՝ Ապահովագրողը կազմակերպում է Ապահովագրված անձին

անհրաժեշտ բժշկական, բժշկատրանսպորտային ծառայությունների, էվակուացիայի, հայրենադարձման և Պայմանագրով նախատեսված այլ ծառայությունների մատուցումը:

9.5. Ապահովագրողն ապահովագրական գումարի սահմաններում կատարում է Ապահովագրված անձին մատուցված ծառայությունների գծով հաշիվների վճարումը կամ հատուցում է Ապահովադրի (Ապահովագրված անձի) ծախսերն այդ ծառայությունները ստանալու համար (եթե այդ ծառայությունները համաձայնեցված են Ապահովագրողի հետ)՝ Ապահովագրված անձի կողմից ծառայության մատուցման և վճարման փաստը հաստատող փաստաթղթերի (հաշիվների, ստացականների և այլն) ներկայացման դեպքում:

9.6. Եթե նախքան բժշկի հետ խորհրդակցելը և/կամ հոսպիտալացումը Ապահովագրողի ներկայացուցչի հետ կապվելն անհնար է եղել, ապա Ապահովագրված անձը դա անում է առաջին իսկ հնարավորության դեպքում: Հակառակ դեպքում Ապահովագրողն իրավունք ունի կատարված ծախսերի դիմաց վճարման պատասխանատվությունը դնել Ապահովագրված անձի վրա: Ցանկացած դեպքում, հոսպիտալացման պարագայում մոտակա բուժհաստատություն կամ բժշկին դիմելիս Ապահովագրված անձը պետք է բուժանձնակազմին ներկայացնի Պայմանագիրը:

9.7. Ապահովագրված անձին հիվանդանոց տեղափոխելու կամ նրա հետմահու հայրենադարձումը կազմակերպելու համար անհրաժեշտ է Ապահովադրի (Ապահովագրված անձի) կողմից հետևյալ պայմանների կատարումը՝

9.7.1. Ապահովագրողին ժամանակին տեղեկացնել տեղի ունեցած պատահարի մասին,

9.7.2. Ապահովագրողի կողմից նշանակված բժիշկ-մասնագետը պետք է ունենա ազատ մուտք Ապահովագրված անձի մոտ և նրա հիվանդության պատմությունից օգտվելու հնարավորություն՝ նրան տեղափոխելու հնարավորությունը որոշելու համար: Եթե այս իրավունքը խոչընդոտվում է Ապահովադրի, Ապահովագրված անձի կամ նրան ուղեկցողի կողմից, ապա Ապահովագրողը ազատվում է բժշկական ծառայությունների դիմաց հատուցում վճարելու պարտավորությունից:

9.8. Ապահովագրական պատահար տեղի ունենալու դեպքում Ապահովագրված անձը կամ նրա շահերը ներկայացնող անձը պարտավոր են գործել Ապահովագրողի հրահանգների համաձայն:

9.9. Ապահովագրված անձի կողմից Ապահովագրողի հրահանգների համաձայն գործելուց հրաժարվելու կամ դրանք ոչ պատշաճ կերպով կատարելու դեպքում Ապահովագրողը ազատվում է տվյալ ապահովագրական պատահարի գծով Պայմանագրով նախատեսված օգնություն և ապահովագրական հատուցում տալու պարտավորությունից:

9.10. Այն դեպքում, երբ Ապահովագրված անձն ինքնուրույն է կրել ապահովագրական պատահարի հետ կապված ծախսերը, նա պարտավոր է ծախսերը կրելուց հետո 5 (հինգ) օրվա ընթացքում ցանկացած հնարավոր միջոցով (ֆաքսով, էլեկտրոնային փոստով, Ապահովագրողի՝ իրեն հայտնի վերջին հասցեով առձեռն ներկայացնելով) Ապահովագրողին գրավոր հայտնել տեղի ունեցածի մասին և ներկայացնել հետևյալ փաստաթղթերը՝

9.10.1. ապահովագրական պատահարի հետ կապված ծախսերի հատուցման մասին դիմում՝ անհրաժեշտ բուժօգնություն ստանալու համար Ապահովագրողին չդիմելու պատճառների հիմնավորմամբ,

9.10.2. Պայմանագրի բնօրինակը,

9.10.3. բժշկական կամ այլ հաստատության հաշիվ-ապրանքագրի և տեղեկանքի բնօրինակները (ձևաթղթի վրա կամ համապատասխան կնիքով), որում նշված է հիվանդի անունը, ազգանունը, ախտորոշումը, բուժօգնություն (բժշկական ծառայություններ) և/կամ այլ

ծառայություններ ստանալու համար դիմելու ամսաթիվը, բուժման տևողությունը, մատուցված ծառայությունների ցանկը՝ ըստ օրերի և արժեքի, ընդամենը վճարման ենթակա գումարը,

9.10.4. տվյալ հիվանդության հետ կապված բժշկի կողմից դուրս գրված դեղատոմսերը՝ կցված կտրոններով, որոնց վրա առկա է դեղատան դրոշմակնիքը և ձեռք բերված դեղամիջոցների ցանկը, որտեղ նշված է յուրաքանչյուր դեղամիջոցի արժեքը: Դեղատան դրոշմակնիքի բացակայության դեպքում դեղամիջոցների արժեքը կհաշվարկվի Ապահովագրողի կողմից՝ ելնելով տվյալ դեղամիջոցի ձեռք բերման օրվա դրությամբ դրա շուկայական արժեքից,

9.10.5. բժշկի կողմից տրված ուղեգրի բնօրինակը՝ լաբորատոր զննում անցնելու համար և լաբորատորիայի հաշիվը՝ ամսաթվերի, մատուցված ծառայությունների անվանումների և արժեքների նշմամբ,

9.10.6. բուժման, դեղամիջոցների և այլ ծառայությունների դիմաց վճարման փաստը հաստատող փաստաթղթերը (վճարումը հավաստող դրոշմակնիքը, դրամական միջոցների ստացման վերաբերյալ ստացականը կամ գումարի փոխանցման վերաբերյալ բանկի հաստատումը):

9.11. Ապահովագրողի (նրա ներկայացուցիչների) հետ չհամաձայնեցված ամբուլատոր կամ ստացիոնար բուժման համար Ապահովադրի (Ապահովագրված անձի) կրած ծախսերը հատուցվում են միայն վերջինիս կողմից Ապահովագրողի (նրա ներկայացուցիչների) հետ կապվելու անհնարինությունն ապացուցող փաստի փաստաթղթային հիմնավորման տրամադրման, ինչպես նաև ապահովագրական պատահարի տեղի ունենալու հետ կապված Կանոնների 9.10 կետում նշված փաստաթղթերի ներկայացման պայմանով, բայց ոչ ավել քան 80 000 ՀՀ դրամի չափով:

9.12. Ապահովագրված անձի կյանքին և առողջությանը հասցված վնասի չափը որոշվում է Ապահովագրողի կողմից՝ համապատասխան թույլտվություն ունեցող իրավապահ մարմինների, դիվանագիտական ծառայությունների, բժշկական հաստատությունների, ծառայություններ մատուցող հիմնարկությունների, դատական մարմինների, ոստիկանության, հրշեջ ծառայության, փորձագիտական ընկերությունների և այլ կազմակերպությունների կողմից տրված փաստաթղթերի հիման վրա, հաշիվների և ստացականների, մասնագիտացված կազմակերպությունների եզրակացությունների և հաշվարկների հիման վրա:

9.13. Ապահովագրողն իրավունք ունի ապահովագրական պատահարի հետ կապված ինքնուրույն կատարել հարցում իրավապահ մարմիններից, բժշկական հաստատություններից, այլ ձեռնարկություններից, հաստատություններից և կազմակերպություններից, որոնք տիրապետում են ապահովագրական պատահարի հանգամանքների մասին տեղեկատվությանը, ինչպես նաև իրավունք ունի ինքնուրույն պարզել ապահովագրական պատահարի պատճառները և հանգամանքները:

9.14. Ապահովագրված անձի կյանքին և առողջությանը հասցված վնասի պատճառների և չափի վերաբերյալ Պայմանագրի կողմերի միջև վեճի ծագման դեպքում կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի իր հաշվին պահանջել փորձաքննության անցկացում:

9.15. Ապահովագրողն իրավունք ունի հետաձգել հատուցում իրականացնելու որոշման կայացումը, եթե՝

9.15.1. Ապահովագրված անձի՝ ապահովագրական հատուցում ստանալու իրավունքը վիճահարույց է՝ մինչև չներկայացվեն Ապահովագրողի կողմից պահանջված փաստաթղթերը,

9.15.2. Ապահովագրական պատահարի տեղի ունենալու փաստերի հետ կապված Ապահովադրի (Ապահովագրված անձի) դեմ ներքին գործերի մարմինների կողմից

հարուցված է քրեական գործ, սկսված է դատական գործընթաց կամ անց է կացվում վարչական հետաքննություն, ինչպես նաև այն դեպքում, երբ անց է կացվում ապահովագրական պատահարի հանգամանքների քննություն՝ մինչև հետաքննության (գործընթացի) կամ դատավարության ավարտի պահը:

9.16. Ապահովագրական հատուցումը (Ապահովագրված անձին մատուցված բժշկական և այլ ծառայությունների վճարումը և/կամ Պայմանագրի պայմանների համաձայն Ապահովագրված անձի կողմից կատարված ծախսերի հատուցումը) կատարվում է Ապահովագրողի կողմից պահանջված փաստաթղթերից վերջինն ստանալուց հետո՝ 7 (յոթ) աշխատանքային օրվա ընթացքում, եթե Պայմանագրով այլ բան նախատեսված չէ:

ԲԱԺԻՆ 10. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

10.1. **Ապահովադիրն (Ապահովագրված անձն) իրավունք ունի՝**

10.1.1. Ապահովագրողից պահանջել նրա պետական գրանցումը և ապահովագրական գործունեությամբ զբաղվելու թույլտվությունը (լիցենզիան) հաստատող փաստաթղթերը,

10.1.2. ծանոթանալ ապահովագրության պայմաններին,

10.1.3. Ապահովագրողի հետ իր հարաբերություններն իրականացնել ապահովագրական գործակալների և բրոքերների միջոցով,

10.1.4. ապահովագրական պատահարի տեղի ունենալու դեպքում անհրաժեշտ փաստաթղթերը ներկայացնելուց հետո ստանալ ապահովագրական հատուցում,

10.1.5. Պայմանագրի կորստի դեպքում ստանալ դրա կրկնօրինակը: Պայմանագրի գործողության ընթացքում Պայմանագրի կրկնօրինակի կորստի դեպքում, Ապահովագրողն իրավունք ունի Ապահովադրից գանձել Պայմանագրի պատրաստման համար կատարված ծախսին համարժեք գումար,

10.1.6. անձամբ կամ ներկայացուցչի միջոցով (այս դեպքում ճիշտ ձևակերպված և հաստատված լիազորագրի կամ իրավունքը հաստատող այլ փաստաթղթի առկայությունը պարտադիր է) դիմել Ապահովագրողին Կանոններով նախատեսված և Պայմանագրում նշված ապահովագրության տարածքում գտնվելու ժամանակ բժշկական ծառայության ծախսերի ձևով կատարված դրամական միջոցների հատուցման համար:

10.2. **Ապահովադիրը (Ապահովագրված անձը) պարտավոր է՝**

10.2.1. վճարել ապահովագրավճարը Պայմանագրի կնքման պահին,

10.2.2. ապահովել ապահովագրական փաստաթղթերի և ապահովագրական դեպքի հետ կապված փաստաթղթերի պահպահությունը,

10.2.3. ապահովագրական դեպքի տեղի ունենալու ժամանակ անձամբ (կամ ներկայացուցչի միջոցով) անհապաղ Պայմանագրում նշված հեռախոսահամարներով կամ ցանկացած մատչելի եղանակով, որը թույլ կտա հաղորդման փաստը օբյեկտիվորեն արձանագրել, տեղեկացնել կատարվածի մասին Ապահովագրողին Ապահովագրված անձի բժշկական և/կամ բժշկատրանսպորտային օգնությունը և դրա հետ կապված ծախսերը համաձայնեցնելու նպատակով,

10.2.4. ապահովագրական պատահարի տեղի ունենալուց ոչ ուշ, քան 24 ժամվա ընթացքում այդ մասին գրավոր տեղեկացնել Ապահովագրողին,

10.2.5. հետևել բժշկական օգնության ցուցաբերման ընթացքում տրված բժշկի նշանակումներին և բժշկական հաստատության կողմից սահմանված կանոնակարգին:

10.3. **Ապահովագրողն իրավունք ունի՝**

10.3.1. Ապահովադրի հետ իր հարաբերություններն իրականացնել ապահովագրական բրոքերների և գործակալների միջոցով,

10.3.2. վերաապահովագրել իր ստանձնած ապահովագրական ռիսկը ինչպես ՀՀ տարածքում, այնպես էլ նրա սահմաններից դուրս,

10.3.3. ուսումնասիրել ապահովագրության օբյեկտը և անհրաժեշտության դեպքում հարցումներ կատարել համապատասխան իրավասու մարմիններին,

10.3.4. միակողմանի վաղաժամկետ լուծել Պայմանագիրը՝ Ապահովադրի կողմից օրենսդրությամբ կամ Պայմանագրով նախատեսված իր պարտականությունները չկատարելու դեպքում,

10.3.5. Եթե Ապահովադիրն (Ապահովագրված անձը) Ապահովագրողին չի հայտնել ապահովագրական պատահարի մասին Կանոններում նշված կարգով և/կամ ժամկետներում, ապա Ապահովագրողը ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1017 հոդվածի 2-րդ մասի համաձայն իրավունք ունի չվճարելու ապահովագրական հատուցումը, եթե չապացուցվի, որ Ապահովագրողը ժամանակին իմացել է ապահովագրական պատահարի վրա հասնելու մասին կամ որ այդ մասին Ապահովագրողի մոտ տեղեկությունների բացակայությունը չէր կարող ազդել ապահովագրական հատուցում վճարելու նրա պարտականության վրա.

10.3.6. իրականացնել Ապահովադրի (Ապահովագրված անձի) անձնական տվյալների մշակում՝ Ապահովագրական պայմանագրի կնքման, կատարման, ուղարկման, պայմանագրի բխող իր իրավունքների իրականացման նպատակներով:

10.4. **Ապահովագրողը պարտավոր է՝**

10.4.1. Ապահովադրին ծանոթացնել ապահովագրության պայմաններին,

10.4.2. Ապահովադրի պահանջով ցույց տալ պետական գրանցումը և ապահովագրական գործունեությամբ զբաղվելու թույլտվությունը (լիցենզիան) հավաստող փաստաթղթերը,

10.4.3. Ապահովադրի պահանջով և օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով փոփոխություններ կատարել Պայմանագրում, եթե նրա գործունեության ընթացքում տեղի է ունեցել ապահովագրական ռիսկի փոփոխություն,

10.4.4. չհրապարակել Ապահովադրի բանկային, ապահովագրական, առևտրային կամ այլ գաղտնիք պարունակող տեղեկությունները:

10.5. Ապահովադիրն ու Ապահովագրողն ունեն օրենքով, Կանոններով և Պայմանագրով սահմանված այլ իրավունքներ ու պարտականություններ:

ԲԱԺԻՆ 11. ՀԱՏՈՒՑՈՒՄՆԵՐ ԱՅԼ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԻ ՆԵՐՔՈ

11.1. Եթե ապահովագրական պատահարն Ապահովագրողի կողմից Կանոնների և Պայմանագրի համաձայն ենթակա է հատուցման և ապահովագրական հատուցում կարելի է ստանալ նաև այլ ապահովագրության պայմանագրի ներքո, ապա Ապահովագրողի կողմից կհատուցվեն միայն այլ ապահովագրության պայմանագրի գծով պարտավորությունը գերազանցող գումարները:

11.2. Եթե ապահովագրական հատուցում ստանալու համար Ապահովադիրն (Ապահովագրված անձն) սկզբից դիմել է Ապահովագրողին, վերջինս համապատասխան հատուցում կատարելուց հետո կապվում է այլ ապահովագրողի հետ՝ ծախսերը բաշխելու նպատակով:

ԲԱԺԻՆ 12. ՎՆԱՍԻ ՀԱՏՈՒՑՄԱՆ ՊԱՀԱՆՋԻ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԱՆՈՑՈՒՄ ԱՊԱՀՈՎԱԴՐԻՑ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՂԻՆ (ՍՈՒԲՐՈԳԱՑԻԱ)

12.1. Ապահովադրի (Ապահովագրված անձի) պահանջի իրավունքը, որը նա ունի վնաս պատճառելու համար պատասխանատու անձի նկատմամբ, անցնում է ապահովագրական հատուցումն իրականացրած Ապահովագրողին՝ վերջինիս կողմից վճարված գումարի սահմաններում:

12.2. Ապահովադիրը (Ապահովագրված անձն) պարտավոր է, հնարավորության դեպքում, վնաս պատճառելու համար պատասխանատու անձանց ներկայացնել պատշաճ կերպով ձևակերպված պահանջ և Ապահովագրողին փոխանցել մեղավոր անձանց նկատմամբ պահանջի իրավունքն իրականացնելու համար բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը:

12.3. Եթե Ապահովադիրը (Ապահովագրված անձն) հրաժարվել է Ապահովագրողի կողմից հատուցված վնասների համար պատասխանատու անձի նկատմամբ իր պահանջի իրավունքից կամ այդ իրավունքն իրականացնելն անհնարին է դարձել Ապահովադրի (Ապահովագրված անձի) մեղքով, Ապահովագրողը լրիվ կամ համապատասխան մասով ազատվում է ապահովագրական հատուցում վճարելուց և իրավունք ունի պահանջելու ապահովագրական հատուցման ավել վճարված գումարի վերադարձ:

ԲԱԺԻՆ 13. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ ՄԱԺՈՐ)

13.1. Կողմերից ոչ մեկը պատասխանատվություն չի կրում Պայմանագրից բխող պարտականություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար, եթե դա հանդիսացել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանք, մասնավորապես՝ ջրհեղեղի, հրդեհի, երկրաշարժի և այլ տարերային աղետների, ռազմական գործողությունների, քաղաքացիական պատերազմի, ցանկացած տիպի ժողովրդական հուզումների, գործադուլների, տնտեսական շրջափակման, ինչպես նաև կառավարության կողմից սահմանված այլ սահմանափակումների և արգելքների:

13.2. Այն դեպքում, երբ 13.1 կետում նշված հանգամանքներից մեկն անմիջականորեն ազդել է պարտականությունը Պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու վրա, դրա կատարումը հետաձգվում է այդ հանգամանքների ազդեցության ժամկետով: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 30 (երեսուն) օրից ավելի, կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի ամբողջությամբ կամ մասնակիորեն լուծել Պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին, և այդ դեպքում կողմերից ոչ մեկը պատասխանատվություն չի կրում հնարավոր վնասների փոխհատուցման համար:

13.3. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը Պայմանագրից բխող պարտականությունների կատարման վրա պարտավոր է ապացուցել այն կողմը, որի պարտականությունների կատարմանը խոչընդոտում է նման ազդեցությունը:

ԲԱԺԻՆ 14. ԱՆՁՆԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՄՇԱԿՈՒՄ

14.1. «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքի պահանջներին համապատասխան Ապահովադիրը (Ապահովագրված անձն) Ապահովագրողին տալիս է իր համաձայնությունը մշակելու ներկայացված փաստաթղթերում և տեղեկություններում պարունակվող իր անձնական տվյալները՝ Ապահովագրողի հետ կնքված ապահովագրական պայմանագրի կատարումն ապահովելու, դրանից բխող իր իրավունքներն իրականացնելու, Ապահովագրողի հետ իրավական փոխհարաբերություններն երկարաձգելու,

Ապահովագրողի այլ ապահովագրական ապրանքների և ծառայությունների մասին տեղեկացնելու նպատակներով: Ապահովադիրը համաձայն է, որ Ապահովագրողը տրամադրի Ապահովագրված անձին՝ Պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման ընթացքի մասին տեղեկություններ, այդ թվում՝ ապահովագրավճարների չափի և վճարման փաստի, ապահովագրական գումարի մեծության, ապահովագրական պատահարի առաջացման փաստի կամ հավանականության, պահանջների առաջացման և մարման, ապահովագրական հատուցման վճարման մասին, ինչպես նաև ապահովագրական պայմանագրի հետ կապված այլ տեղեկություններ: Վերոհիշյալ նպատակներին հասնելու համար Ապահովագրողն իրավունք ունի փոխանցել ապահովագրական պայմանագրի կնքման և կատարման հետ կապված իրեն հայտնի դարձած անձնական տվյալները երրորդ անձանց (այդ թվում՝ փոխանցել դրանք վերաապահովագրողներին՝ վերաապահովագրության պայմանագրեր կնքելու և կատարելու նպատակով), որոնց հետ Ապահովագրողը ունի համապատասխան պայմանագրեր, որոնք ապահովում են անձնական տվյալների անվտանգ պահպանումը և անօրինական բացահայտումից (գաղտնազերծումից) պաշտպանությունը:

14.2. Սույն Կանոնների իմաստով անձնական տվյալները ներառում են, մասնավորապես՝ Ապահովադրի (Ապահովագրված անձի) անունը, ազգանունը, հայրանունը, անձը հաստատող փաստաթղթի տվյալները, սոցիալական քարտի/հանրային ծառայության համարանիշը կամ դրանք չունենալու մասին տեղեկանքի տվյալները, հասցեն, հեռախոսահամարը, ինչպես նաև անձնական կենսաչափական և հատուկ տվյալները (այդ թվում՝ առողջական վիճակի, ռասայական և/կամ ազգային պատկանելության, արհեստակցական միությանն անդամակցման, սեռական կյանքին վերաբերող տեղեկությունները, լուսանկարը, ձայնագրությունը և այլն) և/կամ այլ տեղեկատվություն, որը հնարավորություն է տալիս ուղղակի կամ անուղղակի կերպով նույնականացնել Ապահովադրի (Ապահովագրված անձի) ինքնությունը: Անձնական տվյալներ մշակելը նշանակում է ցանկացած գործողություն (գործառնություն) կամ գործողությունների (գործառնությունների) համախումբ, որը կատարվում է անձնական տվյալների հետ՝ ավտոմատացման գործիքների կիրառմամբ կամ առանց նման գործիքների, այդ թվում՝ տվյալներ հավաքագրելը, արձանագրելը, ձայնագրելը, համակարգելը, կուտակելը, դասակարգելը, պահպանելը, ճշգրտելը (թարմացնելը, փոփոխելը), վերհանելը, արտաբերելը, օգտագործելը, բացահայտելը (տարածելը, այլ անձին հաղորդելը, տվյալներին հասանելիություն տրամադրելը), ապանձնավորելը, արգելափակելը, ջնջելը, ոչնչացնելը, անդրսահմանային փոխանցումը, ինչպես նաև ցանկացած այլ գործողություն, որն անձնական տվյալների հետ իրականացվում է գործող օրենսդրությանը համապատասխան:

14.3. Կետ 14.1-ում նշված Ապահովադրի (Ապահովագրված անձի) համաձայնությունն ուժի մեջ է մնում Պայմանագրի գործողության ամբողջ ժամանակահատվածում, ինչպես նաև պայմանագրի ժամկետն ավարտելուց կամ պայմանագրի շուրջ կողմերի վեճի վերաբերյալ դատական որոշումն ուժի մեջ մտնելուց հետո ևս 5 տարիների ընթացքում: Սույն համաձայնությունը կարող է հետ կանչվել Ապահովադրի (Ապահովագրված անձի) կողմից՝ առնվազն 30 օրացուցային օր առաջ ուղարկելով համապատասխան գրավոր դիմում Ապահովագրողին:

14.4. Ապահովադրից (Ապահովագրված անձից) իր անձնական տվյալների մշակման մասին համաձայնությունը ետ կանչելու, կամ անձնական տվյալներն ուղղելու կամ ոչնչացնելու (եթե անձնական տվյալներն ամբողջական կամ ճշգրիտ չեն, կամ հնացած են, կամ ձեռք են բերվել ապօրինի ճանապարհով, կամ անհրաժեշտ չեն մշակելու նպատակների համար) պահանջ ստանալու դեպքում, Ապահովագրողը պարտավորվում է դադարեցնել այդ անձնական տվյալների մշակման գործողությունները, կամ ուղղել կամ ոչնչացնել անձնական

տվյալները 10 աշխատանքային օրվա ընթացքում, եթե բացակայում են Ապահովագրողի և Ապահովադրի (Ապահովագրված անձի) միջև չկատարված պարտավորություններ և գործող պայմանագրային հարաբերություններ, այլապես՝ Ապահովագրողի և Ապահովադրի (Ապահովագրված անձի) միջև պայմանագրային հարաբերություններն ենթակա են դադարեցման՝ դրանից բխող բոլոր բացասական հետևանքներով: Անձնական տվյալների մշակման մասին համաձայնության հետ կանչման կամ անձնական տվյալների ոչնչացում պահանջելու դեպքում՝ Ապահովադրի (Ապահովագրված անձի) անձնական տվյալները դադարում են մշակվել Ապահովագրողի կողմից, սակայն դրանք պահպանվում են տեղեկատվական արխիվում և կարող են օգտագործվել միայն օրենսդրությամբ նախատեսված դեպքերում: Համաձայնության հետ կանչը հետադարձ ուժ չունի:

14.5. Սույն Կանոնների հիման վրա Ապահովագրական պայմանագիր կնքելով, Ապահովադիրը (Ապահովագրված անձն) հավաստում է, որ տեղեկացված է՝ 14.1 կետում նշված իր համաձայնությունը ցանկացած պահին հետ կանչելու, իր անձնական տվյալները օգտագործող օպերատորների վերաբերյալ տեղեկատվություն ստանալու, իր անձնական տվյալները ճշգրտում պահանջելու և «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքով սահմանված իր այլ իրավունքների մասին: Ապահովադիրը (Ապահովագրված անձն) նաև հաստատում է, որ Ապահովագրողն իրեն տրամադրել է վերջինիս անվան և հասցեի, անձնական տվյալների մշակման նպատակների, ժամկետների, իրավական հիմքերի, անձնական տվյալների նպատակային օգտատերերի մասին և «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքով սահմանված այլ տեղեկատվությունը:

ԲԱԺԻՆ 15. ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ԿԱՐԳ

15.1. Վիճելի հարցերի լուծման ժամանակ Պայմանագրի դրույթները գերակա են Կանոնների դրույթների նկատմամբ:

15.2. Կանոնների և նրա թարգմանությունների միջև տարընթերցման դեպքում նախապատվությունը տրվում է Կանոնների հայերեն տարբերակին:

15.3. Պայմանագրից բխող վեճերը կարգավորվում են Կողմերի փոխադարձ համաձայնությամբ: Այդպիսի համաձայնության ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են Ֆինանսական համակարգի հաշտարարի կողմից՝ «Ֆինանսական համակարգի հաշտարարի մասին» ՀՀ օրենքի համաձայն կամ դատական կարգով՝ ՀՀ օրենսդրության համաձայն՝ ՀՀ դատարաններում: